ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

ՈՐՈՇՈՒՄ N 88

23 հոկտեմբերի 2020 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի դրույթներով.

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է.</u>

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Ձերժինսկի փողոցի թիվ 2 հասցեում գտնվող Արկադի Վարդանի Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող 624 քառակուսի մետր մակերեսով կառուցապատված հողամասի ընդլայնման համար, դրան կից՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող 2/2 հասցեում (08-003-0033-0016 կադաստրային ծածկագրով) բնակավայրերի նպատակային նշանակության 14,6 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական դասակարգման հողամասը և 26,94 քառակուսի մետր շինությունն ուղղակի վաճառքով օտարել Արկադի Վարդանի Գալստյանին:
2. Հողամասի ուղղակի վաճառքի գինը սահմանել տվյալ հողամասի կադաստրային գնի չափով՝ 1 /մեկ/ հեկտարը՝ 5 280 000 (հինգ միլիոն երկու հարյուր ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ 14,6 քառակուսի մետր մակերեսով հողամասի համար՝ 7709 (յոթ հազար յոթ հարյուր ինը) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ 26,94 քառակուսի մետր շինության (կադաստրային ծածկագիր 08-003-0033-0016-001) համար՝ 208516 (երկու հարյուր ութ հազար հինգ հարյուր տասնվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված օտարվող հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ ... 10	Դեմ՝ ... 0	Ձեռնպահ՝ ... 0
ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՆԱԻՐԻ			
ԱՐՄԵՆՅԱՆ ԱՐՄԵՆ			
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՒՐԵՆ			
ՀՈՎՍԵՓՅԱՆ ԿԱՄՍԱՐ			
ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՌԼԵՆ			
ՂԶՐՈՅԱՆ ԳԵՎՈՐԳ	բացակա է		
ՄԵԼԻՔՅԱՆ ԲԱԲԻԿ	բացակա է		
ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ			
ՆԻԿՈՅԱՆ ԱՐՄԵՆ			
ՇԱԲՈՅԱՆ ԳԵՎՈՐԳ			
ՈՒՌՈՒՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ			
ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ			
ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱԳՈՒՆ	բացակա է		
ՍԱՐԳՍՅԱՆ ԶԱՎԵՆ	բացակա է		
ՎԱՐՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ	բացակա է		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2020 թվականի հոկտեմբերի 23
Քաղաք Մարալիկ